ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1957 Общественные науки

Ա. Սրապյան

ՊԼՈՒԶ ԵՎ ԾՈՐԾՈՐԵՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐ*

13-րդ դարի նշանավոր տաղերգու, քերականագետ, տիեզերագետ և քարոզիչ Հովհաննես Երզնկացին իր ուրույն տեղն ունի միջնադարյան հայ գրականության ու կուլտուրայի պատմության մեջ։ Նրա աշխատություններին այլ և այլ առիթով անդրադարձել են շատ հայագետներ, սակայն, մի խոշոր թյուրիմացության պատճառով, նրա կյանքն ու գործունեությունը մինչև այժմ ճիշտ չի լուսաբանվել։

Հայ մատենագրության մեջ հանդիպում ենք երկու դեմքի, նույն անուններով՝ Հովհաննես Երզնկացի, Պլուզ մականունով և մի երկրորդ Հովհաննես Երզնկացի, Ծործորեցի մականունով։ Երկուսն էլ ապրել են գրեթե նույն ժամանակաշրջանում՝ 13—14-րդ դարերում. Պլուզը մի քիչ ավելի վաղ՝ մինչև 13-րդ դարի վերջը, իսկ Ծործորեցին՝ մինչև 14-րդ դարի առաջին քառորդը, Արդյո՞ք նույն դեմքը, նույն անձնավորությունն են նրանք։

Հայագիտության մեջ մինչև վերջերս ընդունված է եղել մի կարծիք։ այն է՝ մի Հովհաննես Երզնկացու գոյություն՝ Պլուզ և Ծործորեցի մականուններով։

Այս հարցին վերջերս անդրադարձել է նաև պատմաբան Լ. Խաչիկյանը, որը հակառակ ընդունված տեսակետի, որոշակիորեն տարբերակում է նրանց, մեկին որակելով որպես բանաստեղծ, քարոզիչ ու գիտնական, մյուսին՝ որպես գրիչ և մատենագիր[1]*։*

Խաչիկյանից չորս տարի հետո լույս ընծայած իր մի ուսումնասիրության մեջ, լեզվաբան Գ. Ջահուկյանը պահպանում է ընդունված տրադիցիոն տեսակետը, այսինքն նույնացնում է երկու Երզնկացիներին[2]*։*

Հովհաննես Երզնկացու մասին եղած այս ուսումնասիրությունների մեջ ամենից ուշագրավը Խաչիկյանի վերոհիշյալ դիտողությունն է, որի մասին հիմնավոր եզրակացություններ անելու համար հարուստ նյութ են տալիս հենց իրենց, հեղինակների՝ Հովհաննես Երզնկացի-Պլուզի և Հովհաննես Երզնկացի-Ծործորեցու անուններով մեզ հասած ստեղծագործությունները։ Սրանց պատմա-բանասիրական և գաղափարական ուսումնասիրությունն ի հայտ է բե-

---

* *Հատված «Հովհաննես Երզնկացի» ուսումնասիրությունից։*

1 *Լ. Խաչիկյան ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (հետագայում՝ հիշատակարաններ) Երևան, 1950, 649 էջ (ծանոթագրություն)։ Այստեղ ևս կա որոշ անճշտություն. բանաստեղծ Հովհաննես Երզնկացուն Լ. Խաչիկյանը թաղված է համարում Հաղբատի վանքում, մինչդեռ, ինչպես ցույց են տալիս մի շարք հավաստի աղբյուրներ (ձեռ. № 3119—1676 թ.), էջ 201բ, Գ. Սրվանձտյան—Թորոս աղբար, հատ. Բ. էջ 50 և այլն),նրա գերեզմանը գտնվում է Երզնկայի ս. Նշան եկեղեցում։*

2 *Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և Միջնադարյան Հայաստանում (5—15-րդ դդ.), Երևան, 1954, էջ 259։*

ում երկու, միանգամայն իրարից տարբեր, անձնավորություններ, որոշակիորեն տարբեր, նույնիսկ իրարամերժ գաղափարներով ու աշխարհայացքով։ Այդ հատկապես արտահայտվում է իրենց ժամանակի համար ամենարնորոշ և քաղաքական բնույթ կրող իրադարձություններում՝ նրանց ունեցած տարբեր դիրքորոշումով։

13-րդ դարի վերջին և 14-րդի սկզբներին Հայաստանում լայն ծավալ ու սուր բնույթ էր ստացել դավանաբանական այն պայքարը, որ գոյություն ուներ հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև՝ կապված միաբարական (ունիթորական) շարժման հետ։ Միաբարություն հրահրողը հռոմեական կաթոլիկ եկեղեցին էր, որ նպատակ ուներ հայ եկեղեցու անկախությունը վերացնելով, իրեն ենթարկել ոչ միայն նրան, այլև հայկական պետականությունը, ի վերջո՝ հայ ժողովրդին։ Միաբարություն տարածողների դեմ (որոնք գործունեություն էին ծավալել արդեն 13-րդ դարի 2-րդ հիսնամյակին), թե՛ խոսքով և թե՛ գործով ակտիվորեն պայքարել է նաև Հովհաննես Երզնկացի Պլուզը։ 1281—1284 թթ. նա եղել է իր ժամանակի գրեթե բոլոր հոգևոր կենտրոններում, կաթողիկոսարանում, արքունիքում, վանքերում և անապատներում, գիտական-աստվածաբանական, դավանաբանական ճառեր կարդացել թե՛ հոգևորականության և թե՛ աշխարհականների համար։ Հակոբ Կլայեցի կաթողիկոսի հատուկ հանձնարարությամբ, որպես պատվիրակ (1281 թ.) մեկնել է Թեոդուպոլիս (Կարին), իր հետ տանելով հայկական եկեղեցու կանոնական հրամանները, այնտեղ գոյություն ունեցող եկեղեցական-կրոնական անհամաձայնությունները կարգավորելու նպատակով[1]։

Սակայն Հովհաննես Երզնկացի Պլուզը եղել է ոչ միայն հայ եկեղեցու կանոնների սոսկ քարոզիչ, այլև շատ կանոնների ու խրատների հեղինակ[2]։

Դրանցից շատերի մեջ Պլուզ Երզնկացին ուղղակի դավանաբանական հարցեր է քննարկում, մեղադրելով միաբարներին ու քաղկեդոնականներին և մերժելով նրանց առաջարկած դավանաբանական, ծիսական գիջումները՝ հռոմեական եկեղեցուն։ Այսպես, օրինակ, դավանաբանական հիմնական հարցերից մեկի՝ ծննդյան և մկրտության տոնի կատարման օրվա կապակցությամբ, որի շուրջը, ինչպես հայտնի է, դարեր շարունակ անհաշտ վեճեր են տեղի ունեցել լատին և հայ եկեղեցիների միջև, մեր հեղինակը գրում է։

Ծննդյան ու մկրտության տոները «...յետոյ ոմանք բաժանեցին ըստ այլ և այլ կարծեաց, ոմանք պատճառանօք և այլք հերձուածողական անբարշտութեամբ և ոմանք տգիտական անուսումնութեամբ։... Եւ արդ, որք բաժանեն զաստուածային տօնսն ի միմեանց, որպէս թէ զծնունդն մարդկային և զմկրտութիւն աստուածային համարելով, վասնզի կարծեն յառաջադիմութեամբ և շնորհօք գալ նմա յորդիութիւն և յաստուածութիւն, զոր օտար և սուտ ընթանրական եկեղեցոյ պարտ է համարել զնոսա։ Իսկ այլ ոմանք տգիտարար անջատեցին ի միմեանց, ...իսկ մեք, որք ճիշտ և ուղիղ հաւատով ունիմք զդաւանութիւնս սրբոց առաքելոցն և զմեծ ի զերիցս երանեալ լուսաւորչին մերոյ

---

[1] «Յոհաննիսի Վարդապետի Եղնկացւոյ, խրատք կանոնական յառաքելոցն և ի հայրապետացն և ի սուրբ լուսաւորչին կանոնացն և կաթողիկոսացն հայոց». ձեռ. № 8356, (1322 թ.), էջ 157բ.։

[2] Ձեռ. №№ 2178 (ԺԴ դար), էջ 92ա, 2329 (1291 թ.), էջ 226ա, 2173 (ԺԴ դար), ամբողջ ժողովածուն և այլն։

սրբոյն Գրիգորի և ըստ տրուչութեան նոցա մեզ, ի միում աւուր կատարեմք տօնախմբութիւն աստուածային իրագործութեան ի մեզ և վասն մեր եղելոյ ...ամբարշտութիւն, ուրեմն, ի բաժանել զաստուածային իրագործութեանցն զխորհուրդ ի միմեանց և յայլ և յայլ յաւուրս կատարել...»[1]։

Այսպիսով, Պլուզ Հովհաննես Երզնկացու և՛ գործունեությունը և՛ ստեղծագործական կյանքը բացարձակորեն վկայում են, թե նա չէր կարող լինել միարար։

Հակառակ սրան, Ծործորեցի Հովհաննես Երզնկացու անունով մեզ հասած ստեղծագործությունները բացահայտորեն վկայում են, որ նրա հեղինակը Ծործորեցին է, այսինքն ապրել է Արտազի Թադեոս Առաքյալի վանքում, որը կոչվել է և Ծործոր։ Իսկ Արտազի այս վանքը եղել է միարարական շարժման կենտրոններից մեկը, որի առաջնորդը՝ Զաքարիա եպիսկոպոս Ծործորեցին միարարության ոչ միայն մասնակիցներից, այլև խոշոր գործիչներից էր և որը մշտական հարաբերությունների մեջ էր կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչների հետ։ Թե՛ նրա և թե՛ վանքի հետ սերտ կապ էր հաստատել Բարդուղիմեոս Բոլոնիացի լատին եպիսկոպոսը, որը իր քարոզգրքի հիշատակարանում Զաքարիային անվանում է «հրամանակատար և անդրդուելի գղեակ միաբանութեան»[2]։

Հովհաննես Երզնկացի Ծործորեցու մասին հետաքրքրական է գրում միարարության ամենահայտնի դեմքերից մեկը, Հովհաննես Քռնեցին.

«Եւ ի մէջ եպիսկոպոսաց, որք եկեալ էին առ այն ժողովն (1317 թ. Ատանայում գումարված միարարական ժողովի մասին է խոսքը—Ա. Ս.), եւ առն Արհեպիսկոպոսն Զաքարիա, որ էր իշխող եկեղեցւոյն սրբոյն Թադէոսի առաքելոյն... Եւ ի մէջ նոցին էր և մեծ վարդապետն Յոհան Ծործորեցի, և այլք բազումք ընդ նմա»[3]։

Այս Երզնկացին է նաև, որ 1321 թ. թարգմանել է միջնադարյան սխոլաստիկայի նշանավոր դեմք և կաթոլիկ եկեղեցու ամենախոշոր գաղափարախոս Թովմա Աքվինացու աստվածաբանությունը («Յաղագս եւթն խորհրդոյ եկեղեցւոյ»), որտեղ շարադրված են այդ եկեղեցու գաղափարական և դավանաբանական հիմնական սկզբունքները։ Թարգմանության հիշատակարանում Ծործորեցին իր վերաբերմունքը հանդեպ հռոմեական եկեղեցին ու Թովմա Աքվինացին արտահայտում է այնպիսի ջերմ խոսքերով, որ կասկած չի թողնում դավանաբանական իր հայացքների ու կաթոլիկ եկեղեցու նկատմամբ ունեցած երկյուղածության մասին։ Նշենք նաև, որ աշխատությունը թարգմանել է ուղղակի Պապի հրամանով, Բարդուղիմեոս Բոլոնիացի ֆրանկ քարոզչի միջնորդությամբ ու օգնությամբ և Զաքարիա Ծործորեցու աջակցությամբ (տե՛ս թարգմանության հիշատակարանը, Ձեռ № 560 (1323/1325), էջ 204ա. համտ. Լ. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակա-

---

[1] «Յովհաննու վարդապետի եկեղեաց գաւառի յԵզնկա քաղաքէ, ասացուած յաւուր ծննդեան և մկրտութեան Քրիստոսի աստուծոյ մերոյ և խորհուրդ միաւորութեան տօնիցն...», ձեռ № 2178, էջ 101ա։ Տե՛ս նաև ձեռ. №№ 2329, էջ 278ա, 2173, էջ 66ա, 131բ, 293ա, 407ա և այլն։

[2] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Բ., Երուսաղեմ, 1944, էջ 259։

[3] Կղեմես վարդապետ Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ աշխարհի, Հռոմ, 1690, էջ 517—518։

բաններ», էջ 173)։ Կասկած չկա, որ այս հիշատակարանի հեղինակը չէր կարող լինել Պլուզ Հովհաննես Երզնկացին, որին Աքվինացու գրքի թարգմանությունը վերագրվել է դարձյալ թյուրիմացությամբ՝ կապված երկու մատենագիրների համանունության հետ։

Այսպիսով, երկու Հովհաննես Երզնկացիներից առաջինը միարարության դեմ տարվող պայքարի պարագլուխներից մեկն է՝ Պլուզը, իսկ երկրորդը՝ միարար և լատին քարոզիչների գործակիցը՝ Ծործորեցին։

Այժմ անդրադառնանք այդ երկու Հովհաննես Երզնկացիների կյանքի ու գործունեության ժամանակի հետ առնչվող հարցերին։

Հովհաննես Երզնկացի Պլուզը, որպես ճանաչված մատենագիր և գիտնական-վարդապետ, ասպարեզ է իջել 1270-ական թվականներին։ Դեռևս 1272 թ. նա հրավիրվել և հատուկ քարոզ է կարդացել Ներսես Պարթևի նշխարների հայտնության առթիվ[1]։ Փիլ անց՝ 1280 թ. նա գրում է Երզնկայում ստեղծված քաղաքային ու աշխատավորական շերտերի կազմակերպության — «եղբայրության»[2] «Սահմանքը և կանոնքը»[3], որը կարող էր անել միմիայն մեծ հեղինակություն ունեցող ու ճանաչված անձնավորություն։ Այնուհետև՝ 1281—1284 թթ. Երզնկացին լինում է Երուսաղեմում, ապա Կիլիկիայում, որտեղ բազմաթիվ փիլիսոփայական, աստվածաբանական ճառեր ու քարոզներ է կարդում թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր տոնակատարությունների առթիվ[4]։ Այստեղ նա սերտ կապի ու փոխհարաբերության մեջ է լինում արքունիքի և բարձրագույն հոգևորականության հետ։ Նույն թվականներին Հակոբ Կլայեցի կաթողիկոսի խնդրանքով քերականություն է ավանդում նրա աշակերտներին և հետագայում գրում ոչ միայն գիտական, այլև բանասիրական խոշոր արժեք ունեցող մի աշխատություն, որը մնում է քերականական գիտելիքների ուսուցման հիմնական ձեռնարկ նաև հետագա դարերում։

1284 թ. Երզնկացին լինում է Տփխիսում և տեղի Կաթուղիկե եկեղեցում տիեզերագիտական մեծ քարոզ է կարդում։ Հետագայում, Ումեկ իշխանի կըրտսեր որդի Վախտանգի և Տեր-Հոհան եպիսկոպոսի խնդիրքով, այդ քարոզը գրի է առնում, ապա նաև չափածոյի վերածում[5]։

Այսպիսով, 13-րդ դարի 70—80-ական թվականներին նա արդեն ամբողջ Հայաստանում և Կիլիկիայում ճանաչված ու հեղինակավոր գիտնական վարդապետ էր, որ նույնիսկ կանոնական ու իրատական շրջաբերական հրահանգներ էր գրում և իր անունից ուղարկում հայ եկեղեցու տարբեր թեմերը։ Ամենայն հավանականությամբ, հետագայում Եսայի Նչեցին էլ օգտվել է հենց այս կանոններից ևս՝ իր կողմից ուղարկված շրջաբերականները պատրաստելիս։

1292 թ. նրան նորից գտնում ենք իր հայրենիքում՝ Երզնկայի ս. Մինասի անապատում[6]։

1293 թ. հետո մեր ձեռագրերում Հովհաննես Երզնկացի Պլուզի մասին

---

1 Ձեռ. № 3069 (ԺԷ դ.), էջ 49ա։

2 Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված եղբայրությունը, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ. 1951, № 12, էջ 73։

3 Ձեռ. № 2173, էջ 257ա.։

4 Ձեռ. № 2173, էջ 1ա, 86ա, 101ա և այլն։

5 «Ցաղագս երկնային շարժմանն...», Ն. Նախիջևան, 1792, «Ցաղագս երկնային զարդուց...», Ն. Նախիջևան, 1792.

6 Ձեռ. № 2325, էջ 194բ.

այլևս որևէ հիշատակության չենք հանդիպում։ Միայն իր իսկ՝ Երզնկացու գործերից տարբեր առիթներով իմանում ենք, որ 1281—1284 թթ. արդեն «տկարացեալ» է մարմնով և չի կարողանում իրականացնել «զգործ մշակութեան տեառն, որպէս արժան էր»։

Կա նաև 1293 թ. մի հիշատակարան, որ գրել է Մովսես Երզնկացու աշակերտներից մեկը։ Այստեղ նա ակնարկում է մի նշանավոր ռաբունապետ Հովհաննի մահվան մասին[2]։

Արդյո՞ք այս Հովհաննը Հովհաննէս Երզնկացի Պլուզը չէ, որ իրոք ամենահիմաստուն ռաբունապետի հռչակ ուներ։ Ալիշանը չկարողանալով հաղթահարել երկու Հովհաննես Երզնկացիների շուրջը ստեղծված դարավոր թյուրիմացությունը, այդ հարցը թողել է անպատասխան և շարունակել նույնացնել Հովհաննես Պլուզին ու Ծործորեցուն։

Հենվելով վերոհիշյալ փաստերի վրա, կարելի է Հովհաննես Երզնկացի Պլուզի մահվան թվականն ընդունել 1293-ը։ Նա թաղվել է, ինչպես հայտնում են մի շարք հավաստի աղբյուրներ[3], իր հայրենի երկրի՝ Երզնկայի ս. Նշան եկեղեցում։

Բոլորովին այլ է Ծործորեցի Հովհաննես Երզնկացու կյանքն ու գործունեությունը։ Նրա մասին մեզ հայտնի առաջին տվյալը վերաբերում է 1302 թվականին։ Այս ժամանակ նա գտնվում էր Գլաձորում, որտեղ և, ըստ երևույթին, աշակերտել է Եսայի Նչեցուն և նրա պատվերով ձեռագրեր ընդօրինակել[1]։

Նրա անունով մեզ հայտնի մատենագրական գործերը շարադրված են 1314 թ. հետո միայն։ Հավանաբար այդ թվականից սկսած նա տեղափոխվել է Արտազ, Ծործորի վանքը, որտեղ և գրել է իր աշխատությունները։ Հետագայում, գուցե և 1320—21 թթ., դավաճանելով հայ եկեղեցուն, նա Հովհան և Հակոբ Երոնեցիների նման, անցել է միաբանողների բանակը։

Ծործորեցուց մեզ հայտնի են հետևյալ աշխատությունները. ա) «Յոհաննիսի Եզնկայեցւոյ, որ Ծործորեցւոյ տիզերալոյս վարդապետի ասացեալ» (աստվածաբանություն, ձեռ. № 627, 1314 թ., էջ 25ա), բ) «Լրումն թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ աւետարանին, որ ըստ Մատթէի, հաւաքեալ նուաստ վարդապետի Յոհաննիսի Եզնկացւոյ, որ և Ծործորեցի կոչեցեալ» (ձեռ. № 2687, 1476 թ., էջ 50ա, շարադրված 1316 թ.), գ) «... Նուաստ Յոհաննիսի Եզընկեցւոյ, որ և Ծործորեցի կոչեցելոյ... (Բանիելի մեկնություն, ձեռ. № 1187, ԺԴ/ԺԵ դար, էջ 308ա, շարադրված 1318 թ.), դ) «Նուաստ վարդապետի Յոհաննիսի Եզընկեցւոյ, որ և Ծործորենցի, արարեալ համառօտ տեսութիւն քերականի» (ձեռ.№ 2326, ԺԴ. դար, էջ 14ա), ե) Թարգմանություն Թովմա Աքվինացու «Յաղագս եւթն խորհրդոյ եկեղեցւոյ», «...նուաստ ոգիս և յոյժ կարօտս բանի Յոհաննէս Եզնկեցի և այժմ կոչիմ Ծործորեցի...» (ձեռ. № 560, էջ 204ա, թարգմանված 1321 թ.)։

Ծործորեցի մականվանը հանդիպում ենք միմիայն այս արձակ գործերում։ Պլուզի անունով մեզ հասած 60-ից ավելի աշխատության մեջ (խրատ, կանոն, սահմանք, քարոզ, մեկնություն և այլն) ոչ մի տեղ Ծործորեցի չի

[1] Ձեռ. №№ 8356, էջ 158ա, 4950 (ԺԶ դար), էջ 1ա, 2329, էջ 26բ։

[2] Ղ. Ալիշան, Հայապատում, 1901, էջ 508։

[3] Ձեռ. № 3119, էջ 201բ, Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, Բ, էջ 50, Հ. Կարնեցի, Տեղեկագիր վերին հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 12 և այլն։

[4] Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, էջ 6, 18, 44, 111 և այլն։

հիշվում, որից հետևում է, թե միայն վերոհիշյալներն են Ծործորեցուն պատկանում։

Այս համոզումն ավելի ևս հաստատվում է այն փաստով, որ նշված գործերի հեղինակը, հավանաբար նկատի ունենալով մյուսի մեծ հռչակն ու ճանաչվածությունը, իր բոլոր աշխատություններում հենց ինքն է նշում՝ «որ և Ծործորեցի», կարծես ընթերցողին ամեն անգամ զգուշացնելու համար, որ չշփոթեն իրեն մյուս Հովհաննես Երզնկացու՝ Պլուզի հետ, մանավանդ, որ վերջինիս բոլոր ստեղծագործություններն արդեն հայտնի էին ամենաուշը 1284 թվականից սկսած։ Այդ նա չի մոռանում նշել նույնիսկ այն դեպքերում, երբ հանդես է գալիս որպես գրիչ.

«...զնուաստ գծող սորին զՅոհաննէս սպասաւոր բանի Եզնկայեցի, որ և Ծործորեցի»[1], կամ «Եւ վերջացեալս ի բիւրոց գործոց զտարտամ գրիչս զՅոհաննէս, ծանօթ բանի և տեղեաւ Եզնկացի, իսկ այժմ Ծործորեցի»[2]։

Արձակից բացի երկու մատենագիրների շփոթությունը արտահայտվել է նաև չափածոյում. Պլուզի տաղերից չորսը, բազմաթիվ ձեռագրերից միայն վեցում, վերագրվել են Ծործորեցուն։ Դրանցից մեկը, որ ընդօրինակված է 1376 թ. № 8029 ձեռագրի 226բ էջում՝ «Յամենայն մեղաց ի զատ, ասէ, դու կացիր» սկզբնավորությամբ, վերնագրված է. «Յոհանէս վարդապետի Եզնկացոյ, որ Պլուզ կոչի»։ 17-րդ դարի գրչություն ունեցող մի ձեռագրում[3] այն գտնում ենք վերագրված Ծործորեցուն։ Իհարկե գործին անտեղյակ գրիչներից մեկը, երկու Հովհաննեսներին շփոթելով, այն վերագրել է իրե՛ն հայտնի Հովհաննես Երզնկացուն, որպես «ճշտում» ավելացնելով նրա Ծործորեցի մականունը։

Այսպես են վարվել նաև այլ գրիչներ Պլուզի մյուս բանաստեղծություններից երեքի հետ ևս, որոնք նույնպես հետագա՝ հիմնականում 17-րդ դարի ընդօրինակություն են[4]։

Եվ այսպես, հայ բանասիրության մեջ ստեղծվել է մի թյուրիմացություն, որի հետևանքն է նաև Հովհաննես Երզնկացի Պլուզին Եսայի Նչեցուն աշակերտ համարելը։ Այդպիսի մի եզրակացության հանգելու համար մեծ դժվարության առաջ է կանգնել Ղ. Ալիշանը։ Չկարողանալով հեշտությամբ հաշտվել այն մտքի հետ, թե Պլուզի հռչակն ունեցող մի մեծ գիտնական վարդապետ կարող է եղած լինել Գլաձորում և աշակերտել Նչեցուն, նա ամեն փորձ անում է՝ մի կերպ բացատրելու այդ անհամոզիչ երևույթը։

Երզնկացին, ասում է նա, «որ զի և տիօք ոչ կրսեր քան զԵսայի երևի գոլ և վաղու իսկ յայտնեալ բանասիրութեամբ զիւր յոյժ մեծ ուսումնասիրութիւնն յայտնէ կրկին աշակերտութեամբն (գէթ լսողութեամբ), և կամ զարդարև մեծ արժանաւորութիւնն Եսայեայ, զոր ոչ կարեմք հաւաստել ի գրուածոցն առ մեզ հասեալոցն»։

---

[1] Ձեռ. № 206 (1318 թ.), էջ 588ա։

[2] Ձեռ. № 2189 (1394 թ.), էջ 440ա։

[3] Ձեռ. № 5306 (ԺԷ դար), էջ 56ա։

[4] «Յամենայն ժամ օրհնեմք», ձեռ. № 474 (1474 թ.), էջ 32բ, «Այրն արարած ըզբեզ ասէ», ձեռ. № 2079 (1553 թ.), էջ 283ա. և «Յիմաստութիւն կենաց վերին», ձեռ. №№ 2397, էջ 196ա, 2407, էջ 196ա. և 3514, էջ 110ա, բոլորն էլ 17-րդ դարու։

[5] Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 131, հմմտ. Հայապատում, հատ. Ա., Վենետիկ, 1901, էջ 303։

Այս թյուրիմացությունը լուծվում է նաև իրենց՝ մատենագիրների կողմից, որոնք տարբեր առիթներով հիշատակում են իրենց ուսուցիչ-վարդապետներին։

Պլուզ Երզնկացու գործերից իմանում ենք, որ աշակերտել է Եսայի Նչեցուց շատ ավելի վաղ ապրած նշանավոր մատենագիր, պատմիչ և կրոնական-քաղաքական մեծ գործիչ Վարդան վարդապետ Արևելցուն[1] (վախճանված 1269 թ.)։ Մինչդեռ Վարդանին նա որակել է որպես «ընտրեալ վարժապետ», «սուրբ հայր», «վարդապետացն առաջնորդ» և իր հոգևոր հայրը, Նչեցու մասին իր երկերում ոչինչ չի հիշել։ Այդ մասին ոչինչ չեն ակնարկում նաև ժամանակակիցները։

Կարևոր է նկատել նաև, որ Եսայի Նչեցին վարդապետ է դարձել 1284 թ. հետո միայն (Գլաձորի համալսարանում), երբ Պլուզն արդեն մեծ հռչակ ունեցող վարդապետ էր, բանասեր-գիտնական, մանկավարժ-ուսուցիչ, քարոզիչ, աստվածաբան ու հասարակական գործիչ։

Նչեցուն որպես ուսուցիչ հիշատակում է Մործորեցի Հովհաննես Երզընկացին, որը եղել է Գլաձորում 1302, 1303, 1306, 1309 թթ. և նրա պատվերով ձեռագրեր է ընդօրինակել[2]։ Այդ մասին նա գրում է.

«Զաստուածեղեն գանձիս ստացօղն, զերջանիկ վարդապետն Եսայիաս լիշեսջիք ի Քրիստոս, ընդնմին և զնուաստ գծող սորին՝ զՅոհաննէս սպասաւոր բանի· Եզնկայեցի, որ և Մործորեցի»[3]։

Այսպիսով լուծված պետք է համարել նաև Պլուզ Հովհաննես Երզնկացուն գրիչ համարելու հարցը ևս։ Պարզ է ու որոշակի, որ Նչեցու ավագ ժամանակակիցը լինելով, որ 1272 թ. արդեն վարդապետ էր, Պլուզը չէր կարող իրենից 12 տարի հետո միայն վարդապետ դարձած Եսայի Նչեցու պատվերով ձեռագրեր ընդօրինակել, այն էլ 1318 թ. կամ աշակերտել նրան։ Անտարակույս մեր ձեռագրերի հիշատակարաններում հանդես եկող գրիչ Հով. Երզընկացին Մործորեցին է, մանավանդ որ այդ գրչությունները կատարված են 14-րդ դարի առաջին քառորդում, երբ Պլուզ Երզնկացին արդեն վախճանված էր։ Պլուզ մականվանը, որպես գրչի, ոչ մի ձեռագրում չենք հանդիպում։

Զափազանց կարևոր է հիշատակել նաև այն փաստը, որ ժամանակով նրանց մոտ կանգնած մատենագիրներն ու գրիչները քիչ տեղյակ են եղել Պլուզի և Մործորեցու տարբերությանը և նշել են այդ։ Այսպես, օրինակ, շատ արժեքավոր փաստաթուղթ է Երզնկացիներից մոտ մեկ դար հետո ապրած Առաքել Սյունեցու վկայությունը, պահպանված իր քերականության մեջ։ Թվելով, թե ովքեր են թարգմանել ու մեկնել քերականությունը, նա գրում է.

«...զի Դաւիթ փիլիսոփայն թարգմանեաց և մեկնեաց զսա, իսկ յետ նորայ Գրիգոր Մագիստրոս այլ ընդարձակ մեկնեաց զԴաւթի մեկնեալն, իսկ յետոյ Յոհաննէս վարդապետն մականուն Պլուզ· համառաւտեաց զնոյն, վասն

---

[1] «Յաղագս երկնային շարժմանն», Նոր Նախիջևան, 1792, էջ Թ. «...Նրատ հասարակաց քրիստոնէից...», ձեռ. № 2329, էջ 226ա. «Մեծ աւուր հինգշաբաթի և թէ կամիս զատկին, յասացուածոց սուրբ հօրն մերոյ Վարդանա վարդապետին...», ձեռ. № 2173, էջ 404ա։

[2] Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, էջ 6, 18, 44, 61։

[3] Ձեռ. № 206 էջ 588 ա։

դիւրալուր լինելոյ։ Եւ յետ նորա Եսայի վարդապետն Գայլիձորոյ այլ համառաւտեաց զնոյն, որ այժմս կայ ի միջի. սոյնպես և Ծործորեցին է համառաւտեալ[1]։

Այստեղից որոշակի երևում է, որ Սյունեցին տարբերում է երկու Երզնկացիներին, մեկին անվանելով Պլուզ, մյուսին՝ Ծործորեցի։ Երզնկացիներին ժամանակով շատ մոտ ապրած և քերականության մասնագետ մի մարդ չէր կարող շփոթել նրանց, եթե իրոք երկուսի հեղինակն էլ նույն Հովհաննես Երզնկացին լիներ, կամ եթե Պլուզ և Ծործորեցի մականունները միևնույն անձնավորությանը վերաբերեին։

Այս ամենից հետևում է, որ Պլուզ և Ծործորեցի Հովհաննես Երզնկացիները երկու տարբեր մատենագիրներ են։

---

1 Ձեռ. № 55 (1489 թ.), էջ 409բ.։